



ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻԷ

«Հոգի՛, մի ասե՛ր «դարձր»

Բէ՛ չէ իմ սիրտս կարունի»...

Մ. ՆԱՂԱՇ

Դիտում եմ անա պանդուխտ օրերիս էկրանը մոայլ.
Ցավով տեսնում եմ մոտիկ անցյալիս վշտերն այլ և այլ.
Ե՛վ լաց, և՛ թախիծ, և՛ արհամարհանք, և՛ տանջանք անել.
Որո՞նք սրտիս պես ինձնից անբաժան ի՞նչ հետ են եղել:

Երկար տարիներ ցուպը զաղթական իմ ձեռքում բռնած,
— Սակայն հոգուս մեջ հայրենի սերը ջանի պես վառած—
Շրջել եմ տխուր օտար ավերի ցուրտ հողի վրա
Բոլորից ծեծված, բոլորից հեշտված որպես «հայ տղա»...:

Մինչդեռ ոսկեշող իմ սովետական հայրենի երկրում,
Երջանկությունը ալիք առ ալիք անում է, հորդում,
Ուր շողշողում են աստղերը կյանքի հուր ցուլի նման,
Որտեղ կոսվում է իմ ժողովրդի շփեղ ապագան:

Փշրե՛ցի ցուպս, ցնցոտիներս վառե՛ցի բնդմիշտ,
Մոռացա ճնշո՛ւմ, չա՛ր արհամարհանք, մոռացա և վիշտ...
Վերադարձա տուն՝ ինձ համար անչա՛փ սուրբ ու սիրելի,
Ավելի թանկ, քան արևները վառ իմ հազար կյանքի...:

ՓԱՅԼԱԿ ՄԻԱՍՏԱՆ

1949

Էջմիածին

